

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ձր.

Վեցամսեայ 6 Ձր.

ԱՐՏԱՍՈՒՄԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով
Տարեկան . . . 12 Ձր.

Վեցամսեայ . . . 7 Ձր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Ե Ի Կ

Ծանոցման տողը
20 սակիւ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՅԷ

Rédaction du journal

„Ipravounk“

VARNA (Bulgaria)

Редакция

на ВѢСТНИКЪ

Иравуни

ВАРНА

Գրութեանը եւ լեւ տրոհի

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ՄԸ

Հայկական Համաժողովին ժողովի մը անհրաժեշտութիւնը արտասահմանեան կարգ մը հայ թերթերու կողմէ մատնանշուած է արդէն, բայց ցարդ անհետեւանք մնացած: Այս անգամ ուսական հայասէր «Նով. Օպ.» թերթը եւ հայերու համար Հաւաքագային ժողովի մը պէտքը ցոյց կուտայ սա երկու դիտարկումը խնդիրներու մասին, 1) որոշել թուրքիա եւ Ռուսիա բնակող հայ ժողովուրդի յարաբերութիւնները գէպի տիրող կառավարութիւնները, 2) որոշել ամբողջ հայ ազգի յարաբերութիւնները գէպի դրացի ազգութիւնները:

«Այս երկու հարցերը, կըսէ լրագիրը—վաղուց արդէն հասունացած են ու կենսական նշանակութիւն ունեն հայ ժողովուրդի համար, իսկ վերջին ժամանակներս, Ռուսիայի ներքին կեանքին բարդութիւնով եւ եւրոպական տէրութիւնների դիւանագիտական յարաբերութիւնների մէջ կատարուած փոփոխութիւններով, այդ հարցերն առաւել եւս սերտ կերպով իրենց վրայ դարձրին հայ ազգի ուշադրութիւնը: Վերջապէս կողմնաւոր նախորդ վարչութեան գործունէութիւնը, որ իւր քաղաքական կուրսութեան մէջ հայերին յայտարարեց թըշնամի Ռուսիայի եւ հայ ժողովուրդին կառավարութեան աչքում վարկաբեկ անելու նպատակով ոչ մի միջոց չխնայեց—անհրաժեշտ պահանջ է առաջ բերել ուս հասարակութեանը բացատրելու հայ ազգի կեանքի իսկական խնդիրներն ու ձգտումները: Թէ որ աստիճան սխալ հայեացքներ են մուտ գործել ուս ժողովուրդի զանազան խաւերի մէջ հայերի մասին, երեւում է նրանից, որ մինչև անգամ թուրք թերթերի զեկավարները հնարաւոր են համարում, օգտուելով ուս հասարակութեան այդ մասին ունեցած տգիտութիւնից, մամուլի միջո-

ցով հրապարակ հանել այնպիսի անհեթեթ պատմութիւններ, որոնք, անշուշտ, չէին երեւան դար եթէ մեր դրացի ուս ու թուրք հասարակութիւնները որքան ե իցէ ճիշտ տեղեկութիւններ ունենային հայ ժողովուրդի բաղձանքների մասին: Հայկական թագաւորութեան մասին եւ դաժ «Հէ. քիաթները», Ռուսիայից բաժնուելու ձգտումները, Անգլիայի հետ հային վերագրուած ինչ որ յարաբերութիւնները—գրանք բոլորը սովորական տարածայնութիւններ են, որոնք չըլլում են ուրիշ իստքերով դատող հայի թշնամիների բերաններում: Այդպիսով, որ կողմից էլ որ նայելու լինենք հայ ժողովուրդի ներկայ դրութեան վրայ, նրա զանազան մասերի իրար մօտ գալիս ու կարծիքների փոխանակութիւն ունենալն, ինչպէս նաեւ նրա բռնելիք ուղղութեան բաղձակողմանի կերպով խորհրդածութեան առնուելը անհրաժեշտ է դարձել:

«Հայկական համաժողովին ժողովն է, որ պէտք է կարողանայ վերջնականապէս պարզել հայ ազգի ապագայ քաղաքականութեան հիմունքները, նրա մերձաւոր նպատակները, նրա յարաբերութիւնները գէպի իրեն շրջապատող առաւել զօրեղ գործունէները, որոնք անուղղակի կերպով ազդում են հայի ազգային կեանքի վրայ, եւ վերջապէս այդ Համաժողովն է, որ պէտք է պարզի հայի յարաբերութիւնները գէպի դրացի թուրք, վրացի եւ այլ ազգութիւնները:»

Նոր-Գարի վերջին թիւերէն միոյն մէջ հայկական համաժողովի մասին հետեւեալ տողերը կը կարդանք.

«Հայ ազգի կեանքի անիւը դուրս է ելած իւր շաղից: Լինի թիւրքիա, Ռուսիա եւ կամ իւր նոր գաղթավայրերում, նա ապրում է արտասովոր մի ճգնաժամի մէջ: Նրա առաջը այսօր դըրուած է, կարծէք, լինելու եւ չը լինելու ճակատագրական հարցը: Նա ամբողջովին կլանուած է գո-

յութեան կուռի ստեղծած հաղարարութեան թիւերից: Նա զգում է, որ պէտք է ոտքի կանգնել, ճանապարհ բանալ, միջոցներ ձեռք առնել փոթորկուած կեանքը խաղաղացնելու համար: Նա տեսնում է նմանապէս, թէ որքան տարտամ ու անկայուն է իւր դրութիւնը եւ թէ որչափ մեծ է կեդրոնանալու, իւր մէջ ամփոփուելու եւ իւր անելիքները լաւ կերպով սրոշելու պահանջը:

«Այդ տագնապալից դրութեան վերջ գնելու, հայ ժողովուրդի մուլար քայլերին ուղղութիւն տալու նպատակով էր, որ «Նոր-Գար» իւր անցեալ համարներից մէկում ամբողջ հայութիւնը հրաւիրում էր էջմիածին: Ժամանակակից հայ կեանքի առաջ մըղած կենսական խնդիրները լուծելու ցանկութիւնն է դարձեալ որ տեղական ուս թերթին հրապարակի վրայ է գնել տալիս «Հայկական համաժողովի» խնդիրը:

«Փոխուել են ժամանակները, փոխուել են երեք տէրութիւնների հպատակութեան տակ ապրող հայ ազգի կեանքի պայմանները: առաջ են եկել նոր յարաբերութիւններ թէ ներքին եւ թէ արտաքին աշխարհի հետ եւ ծնունդ են առել նորանոր կիզիչ հարցեր, որոնք անյետաձգելիօրէն պահանջում են իրենց պատշաճաւոր լուծումը: Հայի առաջ դրուած է մի ընթացիկ խնդիրների շարք, որը պէտք է ենթարկել ընդհանուրի ամենալուրջ քննութեան եւ ընտրել բանաւորը, օգտակարն ու նպատակաւորը:

«Եղած առաջարկի օգտակարութիւնը չի կարող կասկածի ենթարկուել ոչ ոքի կողմից: Գաժամանակի անողոքելի պահանջն է: Սակայն ինչպէս գլուխ բերել այն, եւ ինչպիսի պայմաններ մէջ գնել նրան, որ կարողանայ տալ մեր սպասած արգիւնքն եւ չլաւնայ գատարկ ժամավաճառութիւն: Ահա այն հարցերը որոնք նախ քան գործ-

նականին անցնելը, հարկաւոր է մշակել մամուլի մէջ:

Հայկական Համաժողովի մը կարեւորութեան շեշտուելը արտասահմանեան հայ մամուլէն, ու կողմատի հայ եւ նոյն իսկ հայասէր ուս մամուլին անցնելը կը նշանակէ թէ այդ խնդիրը յաջընդհանուրի մեծ կարեւորութիւն ստացած է, եւ ինչպէս ըսուած է կողմնաւոր օրագրին մէջ, «գաժամանակի անողոքելի պահանջն է»: Իսկ այդ նպատակաւ գործնական քայլը առնելու մասին, Նոր-Գար կ'ըսէ թէ ամբողջ հայութեան ներկայացուցիչները Ս. Էջմիածին հրաւիրուին Ամենայն Հայոց կաթողիկոսին կողմէ:

Հրաւերին կաթողիկոսին կողմէ ըլլալը մենք ալ շատ օգտակար ու նպատակաւոր մար կը գտնենք, բայց ժողովատեղիին մասին համակարծիք չենք. ժողովը եւ ժողովականները ամեն կաշկանդումներէ զերծ ըլլալու համար, հարկ է որ բոլորովին ազատ միջավայր մը ընտրուի: Եւ այդ եւրոպական քաղաք մը կրնայ ըլլալ: Մենք գեռ կանգաւորաւորանք այս խնդրոյն:

ԿՈՎԿԱՍԻ ԴԵՊԵՏԵՐԸ

—[o]—

ԳՈՐԻՍ, 24 սեպտ.— Երջակայ գիւղերի թուրքերը 23-ին յարձակուեցին Կալա-դարասի (Վարա-դշաղ) գիւղի վրայ: Եւ երրորդ անգամ կողմնաւորի վրայ: Յարձակումները քաջութար յետ են մղուած, Յարձակումը կողմը մեծ կորուստներ ունեցաւ: Վրայ հասան գաւառապետ Ս. ալանին եւ նրան օգնական Մենգեկումպը: Այսօր յարձակում գործուեց ինձաժախի վրայ:

Ներսէս վարդապետ

ԳՆՆՁԱԿ, 23 սեպտ.— Թուրքերը եւ հայերը հոգեւորականութեան եւ ընդհանուր նահանգապետի հետ հանդիսաւոր թափօր կազմեցին քա-

դառնում է ձառեր արտասանութիւն եւ կեղեցում եւ մզկիթում ազգայնական կոնքը դադրեցնելու անհրաժեշտութեան մասին : (Պետրոս . հեռ. գործ .)

Անանիա եպիսկոպոսը եւ Բագուէր գործակալ Ջաւէն վարդապետը , որոնք րազուեցնելու կողմից այս օրերը ներկայացան երկրիս փոխարքային , մի-երկու օրից ճանապարհւում են ս . Էջմիածին : Բագուէր դէպքերի առիթով վեհ . Կաթողիկոսին զեկուցումն ներկայացնելու :

Բագուէր հայերի կողմից թիֆլիս հասած աշխարհական պատգամաւորութիւնը ներկայումս սպասում է , որ Կովկասի զանազան կէտերից թիֆլիս ժամանեն բոլոր հայ պատգամաւորները եւ յոյսով միասին ներկայանան փոխարքային , խնդրելու որ խրատ միջոցներ ձեռնարկուեն հայկական կոտորածին վերջ տրուելու համար :

Սեպտեմբերի 22-ին դաւադարացիները կողակտել ու այրել են 30 տնից բաղկացած թուրք Աղանուս գիւղը հետեւեալ օրը , զբացի թուրք ժողովուրդը վրէժ լուծելու համար այրել է Ղալաբարա գիւղի ագարակը եւ գիւղը չընկալած ու հրաքանձաղութիւն է սկսել : Երեկոյնիս այդտեղ հասել են 45 կազակ , ցրիւ են տուել յարձակում գործողներին , որոնք խմբուել են Պրացի լեռների ծերպերում : Սպանուած է 1 հայ , իսկ թուրքերից սպանուածների թիւը յայտնի չէ : Ինչպէս երեւում է , կազակները վրայ արծակելիս են եղել հռաքելան հրաքաններին : Այդ տեղ կարգը պահպանելու համար Աղդամից ուղարկուելու է մի հարիւրեակ կազակ : Առհասարակ Ձանգագուրի գաւառում զրուէթանը սպանական է :

Ալէքսանդրապոլից տեղեկութիւններ են ստացուել , որ սեպտեմբերի 20-ին , Կուրսակի , Սարալա եւ Արշուտա գիւղերից սայլերով նանգի հայ գիւղն ալիւր բերելու համար գնացած 27 թուրքերից սեպտեմբերի 21-ին վերադարձել են միայն 4 հոգի , իսկ մնացածներն անյայտացել են : Գաւառապետը քսան զինուորով ճանապարհ է ընկել անցքի տեղը : Թուրք ժողովուրդը յուզուած է : Արշուտա կայարանի բանուորները փախել են :

ՆՈՐ—ԴԱՐ

Ո՞Վ Է ՄԵՂԱՅՈՐ

Ո՞վ է մեղաւոր . ահա ճակատադրական հարց , որի շուրջը շատ հրապարակաստական գրիչներ եւ վարչական գլուխներ պիտի խորտակուեն : Այդ հարցը մեզ հայերիս եւ թուրքերի համար արեւել լոյսի պէս պարզ է :

Մարկոսը Կիրակոսին վերաւորել է . Մարկոսն ինքը չատ լաւ գիտէ , որ ինքը վիրաւորողն է , եւ Կիրակոսն էլ յիմար չէ , որ չիմանայ թէ՛ Մարկոսն է իրեն վիրաւորողը :

Սա կատարուած իրողութիւն է . Բայց երբ Մարկոսն ու Կիրակոսը դատաւորի առաջ կը կանգնեն իրենց արարքի մասին հաշիւ տալու . Մարկոսը հակառակ իւր ներքին համոզման , հակառակ իւր խղճի ձայնին ուրանում է իւր թուրքը եւ ինքի բաւականաչափ խորամանկութիւն , այլ եւ հմտութիւն ունի կեղծելու , ըսկըսում է հակառակը պնդել թէ՛ Կիրակոսն է իրեն վիրաւորանք անցրել եւ թէ ինքը մի անմեղ մարդ է , խեղճ , մոլերական , խաղաղասէր . . .

Հարկաւ վիճակը կը լրացնեն պապաւոր , եւ ամենայն ինչ կատարուել է :

Մեր աշխարհի վիճակն իսկ եւ իսկ նման է Կիրակոսի դրոշմանը . առնել ամեն տեսակ զրկանք , հալածանք գետերով արւել թափելու եւ դատաւորների առաջ մեղապարտ ճանաչուել :

Արդեօք ո՞րտեղ է օրա դադարիք : Յայտնի է , որ հայր Գոգուեան չըրջանից յետ մնացած ուսն չի նմանի կուէթեան համակրութիւնը չի վայելում . թէ ինչու , ասելը դժուար է , գուցէ եւ այն պատճառով , որ ամեն բանի մասին դեռ չի կարելի բացարձակ խօսել :

Հայը , որպէս օրինապահ , խաղաղ , աշխատող ժողովուրդ , երեւի այնքան էլ հակում եւ նոյն իսկ կարեւորութիւն չունի կաշառ տալու , սրանք բա պոռչներին իւր լիքնու , կոկորդ փափկացնելու :

« Աւա է ոչ մեղանչել եւ ոչ էլ ինչու զուգեցնիաների փրկարար գործիւնանք գիտել » — սա հայի նշանաբանն է :

« Անկը գողութիւն , գնել թողութիւն » . սա էլ նրանց համար է ասուած , որոնց համար գողութիւնը , սպանութիւնը նպատակ է , իսկ թողութիւնը՝ միջոց :

Ինչպե՛ս է , որ հայի խաղաղասիրութիւնը դիւր չպիտի գայ անազնիւ չինովիկին . որովհետեւ դրանով նրա առաջ փակուած է կաշառի ճանապարհը . իսկ նա՛ չինովիկին այդ բանն ուրիշներին բացատրում է այսպէս .

« Եղբայրներ , հայի խաղաղութիւնը խորհրդաւոր է , այլ եւ վտանգաւոր . ո՞վ գիտէ նա ի՞նչ յետին մտքերով է խոյս տալիս չինովիկից . նրան պէտք է հակել . նա գաղտնի նպատակներ ունի » :

Մի ուրիշ դէպքում չինովիկի հայի խաղաղութիւնը ապրանք է տարել . անցել են ամիսներ , տարիներ , բայց փողը դեռ չի վճարուած . հայ վաճառականը կամ արհեստաւորը յանգգնում է յիշեցնել չինովիկին իւր պարտքի մասին . վերջինս կատաղում է , փրփում . նա պատրաստ է այդ անմեղ իրողութեանը քաղաքական նշանակութիւն տալ եւ գոռալ ի լուր աշխարհի . թէ հայը չարչի է . վաշխառու է . նա կեղեքում , հարստահարում է կովկասեան ազգերին , ձեռք է մեկնում աստիճանաւորի գրպանին թէ՛ անհրաժեշտ է ճնշել նրան , սահմանափակել նրա իրաւունքները , ցոյց տալ նրան իւր տեղը :

Հայ ինտելիգենտն ուսել է ուսել սակամ համալսարանում , եղել է արտասահմանում , գիտէ ճանաչել եւ գնահատել անհատական ազատութիւնը , իւր անձի պատիւը , եւ տողորում անգլիկոսեան ազգերին , նա բարձրագլուխ է անցնում պարոն չինովիկի մօտով . պարոնը՝ պարոն , բայց չէ՛ որ նա չինովիկի է , գիտէ թղթերի տակին իւր անունն ստորագրելու եւ ամսի քսանին անխախտ ստանում է պետական քանձարանից իւր

ոսճիկը այս բանը պէտք է լաւ իմանայ հայ ինտելիգենտը եւ չպիտի զրլանայ արժանավայել պատիւը տալու նրան :

Բոլորովին այլ բան է թուրք ամբոխը . նա ձոյլ է , սիրում է գողանալ , սպանել , բերել բերանի պատառ խլել . եւ այս ամենն անպատիւ կատարելու համար նրան հարկաւոր է երկու բան . որքան կարելի է քաշ պահել գլուխը չինովիկի առաջ , քննել , չողորթութիւն , մինչեւ մէջքը կոտնալ եւ ապա մատուցանել իւր ընծան սկսած ձուերից ու ճուտերից ընչեւ ոսկի հորթը :

Եւ թափուած են չինովիկի մեղրածոր չրթուեցնելից գովասանութեան կեղծ մարգարիտները թուրքի հասցէին . էլ ո՛չ մի առաքելութիւն չի մնում , որ չվերագրուի նրան . — հեղ , հեղափոխ , հիւրասէր , հաւատարիմ , ազնիւ . . .

Արդեօք պարզ է հիմա , թէ ինչու չինովիկիները մեծամասնութեան համար հայի առեկի է , թուրքը՝ սիրելի . հայը՝ գող , թուրքը՝ դող , հայն ապտածար , թուրքը՝ հլու հպատակ :

Եւ անկասկած է , որ չինովիկի կազան այս եռական նեղ հայնացքը մեծ դեր է կատարում հայ-թուրքական ներկայ տրագիկայի խաղի մէջ . այդ հայնացքը դարձել է քրոնիկական վարակիչ . նա վարակել է ուսն ամբոխը , նոյն իսկ ինտելիգենցիայի մի որոշ մասը :

Երբ դու խօսում ես օրեւէ պաշտօնատար անձի հետ ներկայ հայ թրքական արիւնհեղութիւններին մասին , զգոյշ եղիւր . նա գիտէ մի օտարապիւր բառ : որով իսպառ զինաթափ կանէ թեզ , եւ կը ջարջախէ քո արդուամենտացիան :

Ո՞վ է մեղաւոր . — կը հարցնես դու : — Մեղաւոր են հայոց կոմիտեաները , — կը պատասխանի քեզ ու այնպիսի խորախորհուրդ լուծութեամբ կը վերջացնի , որ հակաճառելն այլեւս վտանգաւոր է համարուում :

Բանն այնտեղ է հասել , որ թուրքն էլ է այսօր սովորել կոմիտէ բառը եւ իւր ձեռքն զէնք է չինել կարծնով որ նա զբանով պիտի կարողանայ իւր բոլոր կեղտն ու մուրը ծածկել . զո՛ւր յոյսեր . . .

Խնդրեմ , թոյլ տուէ՛ք անկեղծ լինել եւ կոմիտէներին մասին երկու խօսք տան :

Թէ ի՞նչ կոմիտէի մասին է խօսքը , մենք այդ չգիտենք . յայտնի է , որ կոմիտէներ շատ կան աշխարհիս երեսին այլ եւ այլ բնաւորութեամբ . սկսած անիշխանական ահաբեկ տերութիւններից մինչեւ միջերի ու մոլերիկների դէմ մաքառող , կամ շնորի վրէժն օղակներ անցկացնող կոմիտէները :

Բայց մենք հարցը պարզ դնենք ամենքը համոզուած են , կամ ցոյց են տալիս , որ իւր համոզուած են իրենք , թէ հայերն ունին մի կոմիտէ , որի նպատակն է կովկասում եղած չիա կոչուած աղանդաւորներին կոտորել : ձշմարտն ասած . մենք այդպիսի կոմիտէի անուն ամենեւին չենք լսել . ո՞վ որ լսել է , թող հրապարակ գորար գայ եւ ասէ բացարձակ , առանց քաշուելու :

Արդեօք ինչ կարող է անկալի երեւակայական հայ կոմիտէն տեղական թաթարներին կոտորելուց . ինչպո՞ւ , ինչ բաներ են Կովկասի թաթարները , եւ նրանց վերաբերմամբ ի՞նչ գաղափար նպատակներ կարող է ունենալ հայը . ուղիղն ասած , մենք այստեղ ոչինչ չենք հասկանում ,

եւ եթէ կայ հասկացող , թող մեզ էլ մասնակից անէ , մենք չնորհակալ կը լինենք .

Ընդհակառակը , եթէ մեզ ասեն , որ հայերն ունին մի կոմիտէ , որը կովկասեան ազգերի մէջ համերաշխութիւն է քարոզում , կամ չար սերմեր սերմանում տեղացիներին մէջ քուղաքական նպատակներով , մենք ասելու ոչինչ չէինք ունենալ եւ մտքի լոգիկան հետեւողականութեամբ կասէինք , որ դա կարելի բան է , որ այդպէս բան կարող է պատահել :

Արդ՝ ուրիշ ի՞նչ պատճառներ կարող են լինել հայ-թուրքական երկպառակութիւնների համար , եթէ կոմիտէի դերը լոկ ֆիկցիա է :

Շատերը մատնանիչ են անուամտեալական հաշիւները :

Տեսնենք աշխարհայն կէտում ո՞ր չափով են չլուծւում մեր շահերը թուրքերի հետ :

Արդեօք մենք նախանձում ենք թուրքի ուսմանը , նրա մօրի նորաւոր նաւաճումներին գիտութեան այլ եւ այլ ճիւղերի մէջ . ո՛չ , որովհետեւ այդ կէտում մեր հարեւանները կողմնակի անձանց նախանձը չարժիւր ոչ մի գրաւական չունեն :

Առեւտուրի մէջ հայը թուրքից յետ չի մնայ , եթէ չասենք աշխարհ . արհեստների մէջ մրցութեան հետք անգամ չի կարելի օրոնել : Երկրագործ գիւղական ժողովուրդի մէջ շահերի հակառակութիւն չի կարող առաջ գալ , որովհետեւ իւրաքանչիւր գիւղացի—հայ թէ թուրք—ուներ իւր օրոշ հողաբաժինը , որը մեջ չափուած է եւ բերքը քաղուած այն չափով , որ չափով կամեցել է տալ նրան Արարիչը . փառք Առտուծոյ , մեր գիւղացիք էլ այնքան քիչ են արդիւնաբերում , որ ամենի բերքն էլ սպաւուում է տեղն ու տեղը :

Բացի այս՝ հայը եւ թուրքը բոլորովին իրար հետ չընդհարուող , այլ ընդհակառակը մէկը միւսի պակասը , թերին լրացնող պարապմունքներն ունեն :

Մտէ՛ք մի քաղաք Կովկասում , ուր հայեր եւ թուրքեր միասին են ապրում . այդտեղ աշխատանքը շատ պարզ կերպով բաժանուած է հայերի եւ թուրքերի միջեւ :

Մարգավաճառը , կանաչի ծախողը թուրքն է . գրին եւ օղի արդիւնաւորներն ու ծախողը հայն է . մասագործը , իւր ծախողը թուրքն է , իսկ վաճառականը , երկաթվաճառը՝ հայը . հայը կռիւակար է , թուրքը չուստեր կարող , հայը դերձակ է , եւ կաւում է եւրոպական տարաղի շորեր , իսկ թուրքը՝ չուխա եւ արխաւուգ միայն . հայը փողը արդիւնաբերական ձեռնարկութիւնների մէջ է դնում , իսկ թուրքը՝ տոկոսով տալիս . հայը վաճառականութեան եւ արուեստի մէջ նորանոր ճիւղեր մտցնելու . ոիսկ է անուամ , իսկ թուրքը սովոր է ունեցածի վրայ թուխս նստել եւ ձագեր հանել . հայն աւելցնում է գրադարանների , ընթերցարանների , դպրոցների , բարեգործական եւ հրատարակչական ընկերութիւնների թիւը , իսկ թուրքը արձարանների , թէյարանների , ռազերի ու զուռնաների . հայը գիրք է առնում , թուրքը՝ զաշոյն . հայը՝ գրիչ , թուրքը՝ խորովածի շամբուր . . .

Ասացէ՛ք խնդրեմ , էլ ի՞նչ մրցումն կարող է լինել հայի եւ թուրքի միջեւ առեւտրական , ուսման ասպա-

բեղում :
Ոչինչ :
Հետեւապէս պնդել, թէ հայ թրքական կոտորածները պատճառը իբր հայոց կոմիտեաներն են, կամ տնտեսական հողի վրայ առաջացած անտոգոսիզմը—մի այլանշան եւ չարամիտ սուտ է, եւ չենք կարծում, որ գտնուի կովկասում գէթ մի հայ կամ թուրք, որը անկեղծօրէն հաւատար այս բանին : Մենք ամենքս շատ լաւ գիտենք զրա սուտ լինելը, եւ եթէ թուրք կամ ուրիշ պաշտօնեան այսօր հրապարակ են քաշում այդ սուրբագաթը, դա ներքա համար է, որ «կոմիտէ» անունը սարսափելի ազդեցութիւն ունի ռամբիկ ամբօրի վրայ, որ նա ամեն մեղադրանք բարձում է հայի ուսման եւ թուրքին ազատ կացուցանում իւր գործած ստեղծի ոճիրների պատասխանատուութիւնից :
Երկրորդ՝ տնտեսական պայքարը, թէկուզ այնպիսի վայրերի ձեւով, ինչպէս են՝ սուրբ, հրդեհ, գնդակը դարձնալ մի գաղափարական կոնի է, եւ տգէտի իսկական պատճառները թաղում է անխափանցելի խաւարի տակ :

Այս այսպէս լինելուց յետոյ մենք կաշխատենք առաջ ընել մեր պատճառաբանութիւնները, թէ խորտեղից կարող էին առաջ գալ թրքական այս ստեղծի եւ իրենց տեսակի մէջ չը տեսնուած վայրերն իմ գծութիւնները :

ԱՐՏԱԶ

Ա Ր Ա Ր Ի Ա

Բ .

ԱՐԱՐԱՆԵՐԸ ԵՒ ԹՈՒՐԿԵՐԸ

(1867—1902)

Արարներու եւ թուրքերու մէջ կռիւն բոլորովին տարբեր հանգամանք մը ունի եղբայրացիներու դէմ մղուած կռիւն : Թուրքիան միեւնոյն զենքերը չը գործածեր, այլեւս ան կը գործածէ զայն որ իրեն յաջողած է յաճախ, խորամանկութիւն եւ խարդախութիւն :

Յէյսուկ երկու մանչ զաւակ կը ձգէր. Ապտուլահ որ շատ անգութ եւ աղանդաւոր էր, եւ Սէուտ ազատական բնաւորութեամբ : Այս երկու իշխանները տիրապետութեան համար մրցեցան իրարու դէմ : Ապտուլահ չէյալ քաղաքացի եւ թուրք իրեն օգնութեան կանչեց : Սէուտ Ռէատ մնաց Անէյզէններու ցեղին ապաւինեցաւ : Ապտուլահի մոլեռանդութիւնը իրմէ հեռացուցած էր շատ մը մեծ ցեղերու համակրանքը եւ այսպէս զերացուցած էր Դրան հնարքները :

Այն ատեն Պաղատի թուրք վալին, Միտհատ բաշա, յայտարարութիւն մը հրատարակեց, որով Սուլթանին գերիշխանութիւնը կը հռչակէր Նէճիպի վրայ եւ Ապտուլահը այդ նահանգին կառավարիչ կանուանէր : Իր ընտրելին հոն հաստատուելու համար, Անգլիոյ ընդդիմութիւն հակառակ, Նաֆիզ փաշային հրամանին տակ 5000 մարդէ բաղկացեալ բանակ մը Դաթիֆ ցամաք հանել տուաւ :

Սէուտ անոնց դէմ քաղեց եւ բոլորովին ոչնչացուց : Այս դէպքերուն հետեւանք Ապտուլահ Քօլէթ քաղաքացի մինչեւ որ Սէուտ մեռաւ (1874) :

1872—ին, Ռէուֆ բաշա, Պաղատի վալի ըլլալով Միտհատէն յետոյ, Սէուտի հետ բանակցութեանց մտաւ, սա իր փոքր եղբայրը Ապտէլ Րահմանը բանադնաց զրկեց : Թուրք վալին ասիկա բանադնեց :

Սէուտի մահուանը վրայ (1874) Ապտուլահ Րիստ գնաց առանց թուրքերուն հետ բանակցելու եւ իբր անկախ իշխան կառավարեց : Ռէուֆ փաշա, Սուլթանի ծրագրերն ունի ի նպատակ ներքին կոնի մը առաջ ընելու համար, Ապտէլ—Րահմանը ազատ ձգեց : Բայց զա փոխանակ թուրքերուն գործիք ըլլալու, գնաց Հասա, Արապները ոտքի հանեց անոնց դէմ եւ վանեց թուրք պահակազօրքը որ 1875—ին Հօֆուֆ հաստատուելու էր : Հոնկէ ալ էրբիտ յառաջացաւ ուր իր եղբայրը զոհի գործվանք ընդունեց եւ իշխանութիւնը անոր հետ բաժնեց :

Այս անյաջողութենէն կառուած եւ գոնէ Պոլսոյ նկատմամբ երեւոյթները վրկելու բաղձանքով, Պաղատի վալին Նէճէտի բնակիչներուն կողմէ կեղծ խնդրագիր մը պատրուակ ընելով, յայտարարեց թէ Սէուտի գերագաւանդը Անէյզէններու կառավարութեան ինկած է : Նաֆիզ—փաշան Նէճէտի կառավարիչ անուանուեցաւ, բայց երբեք իր պաշտօնին գլուխը չը գնաց :

Միեւնոյն ատեն Պաղատի վալին առատաձեռնութեամբ կը յղիացնէր Նասէրի էմիրը, Մօսթէֆիզներու պետը եւ զանի վեչիւրուիեան աստիճանին կը բարձրացնէր : Զանի Պասրայի վալի անուանեց եւ անոր գրամական օգնութիւններ ըրաւ եւ զենքեր հայթայթեց Ծամառները եւ Շահապները իր իշխանութեան ենթարկելու համար եւ այսպէս իրենց աջակցութեամբ Անէյզէնները նուաճելու մտքով :

Աւելի Սէուտին տեղը անցնելու փառասիրութենէն՝ գինովացած քան թէ Դրան առատ ընծաներէն, Նասր փաշա քաղեց վերոյիշեալ երկու ցեղերուն դէմ, անոնց յաղթեց, եւ քիչ ժամանակի մէջ տարածեց իր տիրապետութիւնը մինչեւ Քուվէթէն անդին, Հասա եւ Դաթիֆ մէջ : Այս յաջողութիւններէն Սուլթանը անհանգիստ ըլլալով զանի Պոլիս հրաւիրեց ուր բանտարկեց (1876) :

Այս դաւադրութենէն անմիջապէս յետոյ թուրքերը իրենցմէ մէկը Պասրայի վալի կարգեցին եւ Նասրէն նուաճուած երկիրները օսմանան նահանգի վերածեցին :

Նասրի որդին Ֆիլիպ փաշա այս գործերէն զոգոհ ապստամբեցաւ 1882—ին : Յաղթուեցաւ, փախաւ :

Սէուտներու մէջ վերաբարձուող ներքին կռիւներէն օգտուելով, մինչ թուրքերու էնթրիքները արեւմտ կողմէն Եփրատի հովիտը, Օմանի Բասիմը, Ծամէրի էմիրութիւնները զաղրեցան տուրք վճարելու : Անէյզէններու եւ ինքզինքնին անկախ յայտարարեցին :

Ծամէրի էմիրը Ապտուլահ—էրրաշա՛ որ Թրոյսալէն հաստատուած էր՝ մեռաւ 1847—ին : Իր որդին Թէլալ՝ որ իրեն յաջորդեց, 1868—ին անձնասպան եղաւ : Թէլալի երկրորդ որդին Մէթուապ, իշխանութեան գլուխը անցաւ եւ մեռաւ 1870—ին :

Ապտուլահ—իպ—էրրաշա՛ի երրորդ որդին Մօհամէտ կառավարութիւնը ձեռք առաւ եւ սպաննեց իր եղբոր Թէլալի երկու որդիները Պէնթէր եւ Պահր, որոնք անոր արգելք ըլլալին : Միայն Թէլալի երրորդ որդին փոքր Նաիֆը՝ որ 1862—ին ծնած էր, խնայուեցաւ իր փոքրիկ ըլլալուն պատճառաւ եւ պահուեցաւ Հայէլի մէջ : Իր չափահաս ըլլալուն նա մերթեյնի հօրեղբոր բարեկամութիւնը եւ անոր յաջորդութիւնը որ իրեն կը խոստացուէր եթէ հրաժարէր իր եղբայրներուն վրէժը լուծելէ, եւ փախաւ Րիստ Սէուտներուն քով :

Մօհամէտ իշխանութեան գլուխը անցնելուն ընկերացած էր իր հօրեղբորորդուին Համիտի հետ, որդի Օպէյաթի, եղբայր Ապտուլահ—իպ—էրրաշա՛ի : Սէուտներուն 1874—ին եղբայրացաւ կոնստնուին ատեն, ինքզինք անկախ հռչակեց ինչպէս որ վերը յիշեցինք, եւ իր իշխանութեան տակ առաւ բոլոր Բասիմը, Ամարաթները : 1880—ին առաւ Հօրանը, Անգլոյորդանները եւ Նոյնիսկ հասա Տամասկոսի գոնները եւ ըստ պառնացաւ անոր :

Ուստի Սէուտի հին կայսրութիւնը բաժնուած էր երեք մեծ հակառակորդ էմիրութիւններու. Ծամէրը, Նէճէտը եւ Միջերկրականի Մօսթէֆիզները : Այս հակառակութիւններէն օգտուեցան թուրքերը, որոնք այդպէսով ամէն ազատութիւն ունեցան Հիճազի մէջ մտնելու ուր վալի մը կըրցաւ հաստատուելու թափքի մէջ, Մէքէթի չէրիֆը հպատակեցնելու նպատակաւ : Նոյնպէս անոնք Ենէմէնի թրքական նահանգի մը կերպարանքը տուին (1880—1885) :

Քիչ տարիներու մէջ, շնորհիւ այս ներքին կռիւներուն եւ նոյնպէս թուրք փաշաներու խորամանկութեան, կեդրոնական Արաբիան երեք կողմէն միանգամայն ճնշուեցաւ, Սուրէան Հիճազէն, Ենէմէնէն եւ Միջագետքէն : Պաղատի վալին գրգռուած կռիւն Մօսթէֆիզներու, Ծամարներու եւ Ծահապներու միջեւ մէկ կողմէ, Ֆէլապ փաշայի անյաջողութիւնները միւս կողմէ, տկարացուցած էին Պաղատի օսմանեան վեցերորդ բանակը : Միեւնոյն ատեն Պասրայէն եւ Ենէմէնէն թուրքերը կը փորձէին հաստատուել Պարսկական ծոցի եւ Հնդկաց ուկրանոսի եղերքներուն վրայ : Այս առաջադրութեամբ Սուլթան Ապտիլ Համիտ բարեփոխեց եւ ընծաներով յղիացուց Քուվէթի չէրիֆ Մօպաթէ—Էսսապահը եւ բարձրացուց վեչիւրութեան աստիճան Սէյտ Բասիմը Հատրամօսի էմիրը : Միեւնոյն պատիւները սրուեցան անչափօրէն Մօհամէտ—իպ—էրրաշա՛իին, որ մեռաւ 1895 ին առանց ժառանգներ ձգելու : Եւ անոր եղբորորդին Համիտի որդի Ապտիլ—Ալիզին, որ իրեն յաջորդեց : Այս վերջինին բաւարար զրկեց 1901 ին, Տամասկոսէն Մէքէթ երկաթուղիի ձեռնարկութեան վայրկեանին, երեք չէրեքէ կիրներ իր հարէմէն : անոր շնորհեց միւլիւրութեան աստիճան եւ ազամանդակու Ռաֆիազի շէանշան :

Բոլոր Արաբիոյ անկախ ցեղերուն մէջ թրքական ոտնձգութիւնը դանդաղեցնելու յառաջանար զրեթէ առանց լուրջ արգէլքի : Մասնակի ապստամբութիւնները Հօրանի, Տուրքիներուն եւ Ենէմէնի (1892) իմամ Համիտ—Էտտիմի, ոչ մի արգելք չէին ունեցած : Հօրանի ապստամբ

բաւթենէն յետոյ, Դուռը նոյն իսկ յաջողած էր Իպ—էրրաշա՛ին գրաւելու բոլոր Անգլոյորդանները որ այսօրուան Քէրաքի մութէնարիֆութիւնը կազմած է (1893) :

Այլեւս չէր կարծուեր որ բան մը կարող ըլլար Թուրքերը կասեցնելու : Ապտիլ—Համիտը կրնար արդէն յուսալ թէ շուտով իր հրամանին տակ միլիոններով անվախ զինուորներ կուեննայ զորս իրեն պիտի հայթայթէին արաբական ցեղերը, եւ թէ այսպէս մարմին պիտի տար իր համբաւական երազին : Ինք հաշույ չէր առեր Անէյզէնները, Սէուտներու ազգեցիկ սերունդը, Արաբներուն անկախութեան սէրը եւ անոնց առեւտրութիւնը զէպի օտարականը եւ դէպի Թուրքը, եւ նոր ոգին երթտասարդ Արաբներուն կրթուած մար (Եւրոպոյ) վարժարաններուն մէջ եւ վերահասու նոր պատմութեան :

(Էսթրէն)

4. ՀՈՒՄԱՌ

ԱԶԳԱՅԻՆ

Մովսէս եպիսկոպէս Վեօմրիւքճեան՝ որուն Պուլկարիոյ համար Պատրիարքանորդ կարգուած լինելը քանի մը ամիս առաջ Պոլսոյ թերթերուն մէջ կարդացած էինք, «այժմ Պէշիկթաշի եկեղեցին իրբեւ հիւր կը մնայ, որովհետեւ իր նոր պաշտօնին մասին վերջնական կարգադրութիւն չէ եղած» կրտսն նոյն թերթերը : Սա պէտք է հասկնալ թէ թուրք կառավարութիւնը այդ պահանջողական եկեղեցականն այս արտասահման հանել չ'ուզեր եւ անոր վրայ աւելի մօտէն հսկելու համար, Սուլթանը իր պալատին մօտը գտնուող Պէշիկթաշ թաղին մէջ զանի հիւրասիրած է :

—Երուսաղէմի նախկին ելեմտից տեսուչ Ղեւոնդ վարդապետը՝ որ այժմ Պոլիս կը գլուխուրդէ եւ որ վաղեք 20,000 լիւրայի չափ պարտքի տակ ձգած է, յայտներ է թէ այսօրու գանձելի 4000 լիւրայի գումար մը կայ : Օրմանեան ամիջապէս իմացուցեր է Տ. Յարութիւն պատրիարքին որ այդ պատկառելի գումարը գանձելու հետեւին : Զարմանալի չէ որ Ղեւոնդ վարդապետ մը այդչափ կարեւոր պահանջ գաղտնի պահած էր ցարդ, եւ դեռ ինչեք . . . :

—Ստացած ենք Ռուսչուգի աղդ. երկսեւ վարժարանաց 1904-1905 ի տեղեկագիրը : Այս կտրեւոր վաւերագրի մասին կը խոստանանք մեր յառաջիկայ թիւերուն մէջ ընել մեր գիտողութիւնները ու գնահատումը :

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

— 0 —

Ընկերութիւնս իր մասնաւոր շնորհակալութիւնը կը յայտնէ ամէն տնոնց որոնք Սեպտ. 30—ին սուրբ

